Այս զեկույցը մշակվել է «Ունիսոն» ՀԿ-ի կողմից Հայաստանում հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրականության դրսևորումների բացահայտման նպատակով «Պայքար հաշմանդամության հիմքով խտրականության դեմ» ծրագրի շրջանակներում:

Խտրականության դրսևորումները հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ

Զեկույցի հեղինակ՝ Անահիտ Ղարիբյան

Funded by the European Union and the Council of Europe

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Implemented by the Council of Europe

Այս զեկույցը պատրաստվել է «Արդարադատության մատչելիության խթանում Արևելյան գործընկերության երկրներում խտրականության, ատելության հիմքով կատարվող հանցագործությունների և ատելության խոսքի զոհերի համար» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է Եվրամիության և Եվրախորհրդի կողմից և իրականացվում է Եվրոպայի խորհրդի կողմից: Հրապարակման մեջ արտահայտված կարծիքները չեն արտահայտում որևէ կողմի պաշտոնական կարծիքը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումներ 2
Ներածություն 4
Հետազոտության մեթոդաբանություն 6
Հետազոտության նպատակ 6
Հետազոտության օբյեկտ 6
Հետազոտության առարկա 6
Մեթոդական մաս 7
Ընտրանք 8
Հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրականության բացառման իրավական հիմքերը 8
Հաշմանդամություն ունեցող անձանց ներկա վիճակը Հայաստանում 11
Միջավայրի մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար 14
Հարցվածների կարիքների քարտեզագրում 16
Մասնակցությունը հանրային կյանքին 17
Խտրականության դրսևորումները 19
Հարցման մասնակիցների սոցիալ-դեմոգրաֆիական տվյալները 25
Առաջարկություններ 27

Գրաֆիկ 1.Հարցվածներն ըստ հաշմանդամության խմբերի 8
Գրաֆիկ 2. Հարցվածների հաշմանդամությունն՝ ըստ ֆունկցիոնալ խանգարումների 8
Գրաֆիկ 3. Հաշվառված հաշմանդամների թվաքանակն ըստ տարիքային խմբերի, 2020թ. տարեվերջ 11
Գրաֆիկ 4. Հաշվառված հաշմանդամների թվաքանակն ըստ հաշմանդամության խմբերի, 2020թ. տարեվերջ (մարդ) 11
Գրաֆիկ 5. Հաշվառված հաշմանդամների թվաքանակն ըստ հաշմանդամության պատճառների, 2020թ. տարեվերջ (մարդ) 11
Գրաֆիկ 6. Հաշմանդամների թիվն ըստ մարզերի, 2020թ. տարեվերջ 12
Գրաֆիկ 7. Միջավայրի հարմարեցում հաշմանդամների կարիքներին 14
Գրաֆիկ 8. Հաշմանդամների ակտիվության և կենսաապահովման միջոցները 14
Գրաֆիկ 9. Հարցվածների բավարարվածությունը քաղաքում/համայնքում առկա պայմաններից 15
Գրաֆիկ 10. Հարցվածների մասնակցությունն ընտրություններին 17
Գրաֆիկ 11. Ընտրությունների ժամանակ հաշմանդամների քվեարկության գաղտնիությունն ապահովելու համար ստեղծված պայմաններն ըստ հարցվածների 17
Գրաֆիկ 12. Հարցվողների մասնակցությունը որոշումների կայացմանը (մարդ) 18
Գրաֆիկ 13. Հարցվածների՝ խտրականության հանդիպելու դեպքերը 19
Գրաֆիկ 14. Հաշմանդամության պատճառով խտրականության դրսևորումները 20
Գրաֆիկ 15. Հաշմանդամության պատճառով խտրականության տարբեր դրսևորումների հանդիպման հաճախականությունը հարցվողների մոտ 21
Գրաֆիկ 16. Սեռով պայմանավորված խտրականություն 21
Գրաֆիկ 17. Հաշմանդամության պատճառով խտրականության հանդիպելիս ձեռնարկվող գործողությունները 22
Գրաֆիկ 18. Խտրականության հանդիպելիս հարցվողների՝ իրավունքների պաշտպանության կարողությունները 22
Գրաֆիկ 19. Անհրաժեշտ օգնության հնարավորությունները խտրականության հանդիպելիս 22
Գրաֆիկ 20. Հայաստանում անխտրական միջավայրի ապահովման գործող սկզբունքները 23

Հապավումներ

ԱՍՀՆ – Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

ՎԿ – Վիճակագրության կոմիտե

ՀԿ – Հասարակական կազմակերպություն

ՏԻՄ – Տեղական ինքնակառավարման մարմիններ

ՔՀԿ – Քաղաքացիական հասարակության կազմակերպություն

ՄԻՊ – Մարդու իրավունքների պաշտպան

Հ.Պ. - Հրաժարվում եմ պատասխանել

Դ.Պ. – Դժվարանում եմ պատասխանել

Ներածություն

Հայաստանում հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրականության դրսևորումները ոչ միայն սոցիալական, այլև ինստիտուցիոնալ մակարդակներում են հանդիպում: Հասարակության մեջ հավասար և անխտրական միջավայրի ստեղծումն առաջին հերթին պետության և պետական ինստիտուտների պատասխանատվության ներքո է: Այս առումով թեպետ որոշակի քայլեր արվում են հաշմանդամների համար անխոչընդոտ միջավայրի ստեղծման համար, սակայն դեռևս կատարված աշխատանքները չունեն համակարգային և համատարած բնույթ: Թերևս վերջին տարիներին միայն Երևանում և հազվադեպ մարզերում կարելի է նկատել թեքահարթակների թվի ավելացում և ձայնանշանային լուսաֆորների առկայություն, որոնք ցուցադրաբար տեղադրված են քաղաքի կենտրոնական փողոցներից մի քանիսում: Միևնույն ժամանակ դրանք համապատասխանեցված չեն մյուս խաչմերուկների լուսաֆորների հետ: Այդուհանդերձ, մենք գտնում ենք, որ ոլորտում իրականացվող բարեփոխումներն ու միջոցառումները բավարար չեն: Հաշվի առնելով նաև նախորդ տարվա ընթացքում տեղի ունեցած պատերազմն ու դրա հետևանքով հաշմանդամություն ստացած անձանց մեծ թիվը, օր առաջ անհրաժեշտ է ստեղծել անխտրական և անխոչընդոտ միջավայր հասարակության բոլոր անդամների, տվյալ դեպքում՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Մյուս կողմից էլ հասարակության շրջանում իրազեկվածության բարձրացման ու կրթական ծրագրերի միջոցով անհրաժեշտ է ապահովել հաշմանդամների սոցիալական ներառումը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: Այս ուղղությամբ թեպետ կան պետական ծրագրեր, որոնք նպաստում են հաշմանդամների սոցիալ-տնտեսական ակտիվության բարձրացմանը, սակայն դրանք մեծամասամբ կրում են ձևական բնույթ և չեն ապահովում հաշմանդամների ամբողջական ներգավվածությունը հասարակական կյանքում: Այս է պատճառը, որ հաշմանդամների շրջանում անցկացված գրեթե բոլոր հետազոտություններում օրախնդիր է համարվում զբաղվածության հարցը: Մեր հետազոտության շրջանակներում ևս հարցմանը մասնակցած գրեթե բոլոր անձինք որպես խտրականության դրսևորման ամենաառաջնային գործոն համարել են աշխատանք գտնելու դժվարություններն ու գործատուների ոչ բարեկիրթ, խտրական վերաբերմունքն իրենց նկատմամբ:

Հետազոտության հիմնական բացահայտումներն են՝

- Հայաստանում հաշմանդամների ներկա վիճակի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանց նկատմամբ վերաբերմունքն ու առկա քաղաքականությունները հնարավոր չէ համարել անխտրական և/կամ հավասար: Ընդ որում խտրականությունը միաժամանակ դրսևորվում է նաև գենդերային հիմքով:
- Հանրային միջավայրը հարմարեցված չէ հաշմանդամների կարիքներին:
- Հաշմանդամություն ունեցող անձանցից շատերի համար կարևոր տեղեկատվությունը, թե որտեղ և ինչպես կարող են ստանալ սոցիալական աջակցություն, մասնակցեն մշակութային, սոցիալական և այլ համայնքային միջոցառումներին, դիմեն իրավունքների պաշտպանության համար և/կամ ստանան իրավական խորհրդատվություն, հասանելի չէ, ինչն էլ գերակշիռ մեծամասնության դեպքերում պատճառ է դառնում հասարակական գործընթացներում մասնակցության նվազմանը, իրավունքների պաշտպանության ցածր աստիճանի, նաև շղթայաբար հանգեցնում է հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրականության ավելացմանն ու նրանց մեկուսացմանը:
- Հարցվածների 60%-ն ընդհանրապես բավարարված չէ տրանսպորտային միջոցների հարմարություններից, որն իր հերթին հանգեցնում է հաշմանդամություն ունեցող անձանց տնտեսական և սոցիալական ակտիվության անկմանը:
- Փողոցներում, անցումներում, բնակելի և հասարակական նշանակություն ունեցող շենք-շինություններում բացակայում են հաշմանդամների կարիքներին համապատասխան հարմարությունները. չկան հարթ մուտքեր կամ թեքահարթակներ, վերելակային հարմարություններ, ապահովված չէ նաև տրանսպորտի մատչելիությունը:

- Հարցվածների գրեթե կեսը մասնակցում է ՏԻՄ և համապետական ընտրություններին: Հետաքրքրական է, որ ընտրություններին չմասնակցողների 78% քաղաքաբնակ հարցվողներն են, այսինքն՝ գյուղական բնակավայրերում հաշմանդամություն ունեցող անձանց քաղաքական մասնակցությունն էականորեն բարձր է:
- Երկրում որոշումների կայացման գործընթացում ամենաակտիվ մասնակցությունը հարցվողներն ունենում են ընտրությունների միջոցով. հարցվածների 69%-ը կամ 83 հոգի նշել են, որ մասնակցում են ընտրություններին: Այնուհետև որոշումներին մասնակցության ակտիվությունը դրսևորվում է սոցիալական կայքերում կարծիքներն արտահայտելու միջոցով, որը նշել են հարցվածների 64%-ը կամ 77 հոգի: Հարցվողներն ամենաքիչը մասնակցում են ավագանու նիստերին. 79% կամ 95 հոգի նշել են, որ չեն մասնակցում դրանց: Այնուհետև, 74% կամ 89 հոգի նշել են, որ չեն մասնակցում օրենքի առցանց քննարկումներին, 70% կամ 84 հոգի չեն մասնակցում ստորագրահավաքներին, 68% կամ 81 հոգի դիմում-բողոքներ չեն ներկայացնում և 62% կամ 74 հոգի չեն մասնակցում հանրային քննարկումներին:
- Հարցվածների գերակշիռ մեծամասնությունը՝ 69%-ը, երբևէ հանդիպել է խտրականության: Ընդ որում՝ խտրականության հանդիպած հարցվածների 58%-ը հիմնականում հենաշարժողական ֆունկցիաների խանգարումներով հարցվողներն են, 31%-ն ունեն հաշմանդամության 1-ին խումբ, 29%-ը՝ 2-րդ խումբ, իսկ 27%-ը՝ 3-րդ: Խտրականության հանդիպած հարցվածների 38%-ը տղամարդիկ են, իսկ 62%-ը՝ կանայք: Այսինքն՝ կանայք շուրջ 1,5 անգամ ավելի հաճախ են հանդիպում խտրականության: Այլ ընդգծված խտրականության դրսևորումներ՝ ըստ բնակավայրի տիպի, կրթության և տարիքի, չեն արտահայտվել:
- Հարցվածները հաշմանդամության պատճառով ամենաշատ մտահոգություններն ունեն գումար ձեռք բերելու և ապագայում ընտանիք կազմելու հարցում: Այսպես, հարցվածներից 46-ն իրենց հաշմանդամության պատճառով մտավախություն ունեն, որ հնարավոր է անհրաժեշտության դեպքում իրենց չեն տրամադրի վարկ (ապառիկ վաճառք), գումար: Հաջորդիվ ըստ հաճախականության հարցվածներից 45-ը մտավախություն ունի, որ չի գտնի իր երկրորդ կեսին կամ չի կարողանա ընտանիք կազմել: Հաջորդիվ, հարցվածների 32-ի մոտ մտավախություններ կան, որ հաշմանդամության պատճառով կարող են իրենց մատնացույց անել, անվանարկել կամ ծաղրել հանրության առաջ, և 34-ն էլ անհանգստանում և լարվում են գործատուի մոտ՝ մտածելով, որ վերջինս իրենց կծաղրի կամ կվիրավորի: Հարցվածներն քիչ հավանական են համարում, որ խնամատարի կամ բուժքրոջ կողմից վատ վերաբերմունքի և անտեսման արժանանան: Նույն կերպ նաև ցածր է խտրականության հավանականությունը կրթական հաստատություններում: Ինչպես երևում է արդյունքներից, բռնության հանդիպելու մտավախությունները ևս շատ չեն հարցվողների շրջանում. միայն 19-ն են նշել, որ վախենում են ֆիզիկական հարձակումներից, երբ մարդաշատ վայրերում են հայտնվում:
- Հարցվածների գերակշիռ մեծամասնությունը կյանքի ընթացքում բախվել է անհավասար վերաբերմունքի, ողջամիտ հարմարությունների չապահովման և վատ վերաբերմունքի: Այս հարցում ևս երևում է, որ հաշմանդամությամբ պայմանավորված բռնության դեպքերը շատ հազվադեպ են հանդիպում: Հարցվողների 25%-ը նշել է, որ երբևէ խտրականության չի հանդիպել: Հետաքրքրական է, որ ավելի շատ կանայք են կարծում, որ խտրականության կհանդիպեին, եթե հակառակ սեռն ունենային: Այսպես, 65% կանայք մտավախություն ունեն, որ եթե տղամարդ լինեին կհանդիպեին խտրականության և 35% տղամարդիկ են կարծում, որ խտրականությունը հավանական կլիներ, եթե իրենք կին լինեին:
- Հարցվածների մեծամասնությունը՝ 80 անձինք, նշել են որ խտրականության հանդիպելիս նրանք փորձում են ինքնուրույն լուծել խնդիրն առանց որևէ մեկին դիմելու: Հետաքրքրական է, որ կանայք (57%) ավելի հաճախ են նշել, որ ինքնուրույն են լուծում խնդիրն առանց միջամտության:

Հետազոտության մեթոդաբանություն

Հետազոտության նպատակ

Հետազոտության նպատակն է պարզել Հայաստանում հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ ցանկացած տիպի խտրականության դրսևորումները կրթության, աշխատանքի, սոցիալական հարաբերությունների, առողջապահության և կենսագործունեության այլ ոլորտներում:

Հետազոտության նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

1) Իրականացնել փաստաթղթերի վերլուծություն՝ նախկինում իրականացված ուսումնասիրությունների, օրենսդրական կարգավորումների և խնդրին առնչվող նյութերի հիման վրա
2) Դուրս բերել վիճակագրական տվյալներ և ցուցանիշներ
3) Պարզել հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը հանրային կյանքին
4) Պարզել հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրականության բացառման պետական մոտեցումները
5) Պարզել հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրականության դրսևորումները
6) Պարզել հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրականության վերացման արդյունավետ մեխանիզմները
7) Պարզել սեռով պայմանավորված խտրականության դրսևորումները հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ
8) Պարզել հանրային բարիքների (կրթություն, առողջապահություն, ծառայություններ և այլն) հասանելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար և իրավունքների իրացման ընթացքում առկա խտրականության դրսևորումները:

Հետազոտության օբյեկտ՝

ՀՀ-ում հաշմանդամություն ունեցող անձինք

Հետազոտության առարկա՝

ՀՀ-ում հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրականության դրսևորումները

Հասկացությունների սահմանում

Գենդեր - տղամարդկանց և կանանց միջև հարաբերությունների սոցիալական կողմը, որը դրսևորվում է կյանքի բոլոր ոլորտներում, ներառյալ քաղաքականությունը, տնտեսությունը, իրավունքը, գաղափարախոսությունը և մշակույթը, կրթությունն ու գիտությունը:

Գենդերային հավասարություն - կանանց և տղամարդկանց հավասար իրավական կարգավիճակը և դրա իրացման հավասար հնարավորությունները, որոնք անձանց, անկախ սեռից, հնարավորություն են տալիս ազատորեն գործադրելու իրենց ունակությունները կյանքի քաղաքական, տնտեսական, սոցիալական, հասարակական և մշակութային ոլորտներում:

Հաշմանդամություն ունեցող անձ[1] - անձ, ով ունի ֆիզիկական, հոգեկան, մտավոր և զգայական ոլորտների երկարաժամկետ կամ կայուն սահմանափակումներ, որոնք, բախվելով տարբեր միջավայրային արգելքներին, խոչընդոտում են նրա՝ մյուսների հետ հավասար հիմունքներով, լիարժեք ու արդյունավետ մասնակցությունը հասարակական կյանքին:

Սոցիալական ներառում - հաշմանդամություն ունեցող անձի հավասար ներգրավվածությունը և ակտիվ մասնակցությունը հասարակական կյանքին:

Խտրականություն - էապես նման իրավիճակում որոշակի հատկանիշներով օժտված անձանց նկատմամբ տարբերակված վերաբերմունքի դրսևորում՝ առանց որևէ օբյեկտիվ հիմքի կամ ողջամիտ բացատրության: Մեր դեպքում՝ հաշմանդամության պատճառով ցանկացած տարբերակում, բացառում կամ սահմանափակում, որը խոչընդոտում է հաշմանդամություն ունեցող անձի՝ մյուսներին հավասար իր իրավունքների և հիմնարար ազատությունների իրացմանը քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային, քաղաքացիական կամ ցանկացած այլ ոլորտում:

[1] Քաջատեղյակ լինելով «հաշմանդամ» տերմինի շուրջ առկա բանավեճերից, այնուամենայնիվ, տեքստը ծանրաբեռնելուց խուսափելու նպատակով կիրառում ենք սույն զեկույցում նաև այս տերմինը՝ հաշվի առնելով այն փաստը, որ դա ընդունելի և կիրառելի է հաշմանդամություն ունեցող անձանց մեծամասնության կողմից:

Հաղորդակցություն - խոսակցական, ժեստերի լեզվով, նշանների և տեքստերի պատկերման, Բրայլի, շոշափողական, ընթեռնելի տառերով տպագրության, ինչպես նաև մատչելի այլ տեղեկատվական և հաղորդակցային միջոցներ:

Մեթոդական մաս

Հետազոտության շրջանակներում իրականացվել են առցանց հարցումներ հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում:

1. ԱՌՑԱՆՑ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Առցանց հարցումներն իրականացվում են, երբ հետազոտության համար թիրախային խմբերն անհասանելի են տարբեր պատճառներով: Այսինքն՝ հնարավոր չէ նրանց հետ անցկացնել դեմ առ դեմ հարցազրույցներ ֆինանսական միջոցների կամ ժամանակի սղության պատճառով:

Ուսումնասիրության շրջանակներում հարցումներն իրականացվել են առցանց՝ հիմք ընդունելով թեմայի զգացմունքային անձնական բնույթը, ինչպես նաև համավարակային սահմանափակումները: Ընդհանուր առմամբ լրացվել է 120 առցանց հարցաթերթիկ:

2. ՈՐԱԿԱԿԱՆ ԽՈՐԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ

Որակական հարցազրույցների միջոցով հնարավոր է հետազոտել սոցիալ-տնտեսական, մշակութային, միջավայրային փոփոխություններն ու երևույթների որակական տեղաշարժերը, ինչպես նաև գնահատել իրականացված սոցիալական ծրագրերի արդյունավետությունը: Այս մեթոդի միջոցով հնարավոր է հասկանալ մարդկանց սոցիալական փորձը և վերակառուցելու իրադարձությունները, որոնց հետազոտողներն անմիջական մասնակցություն չեն ունեցել: Որակական հարցազրույցների տեսակներից՝ խորին հարցազրույցները թույլ են տալիս ստանալ անձանց փորձառության խորը և բովանդակալից տեղեկատվություն: Հարցազրույցի այս տեսակը ճկուն է և դինամիկ, հնարավորություն է տալիս հետաքրքրող հարցերի շրջանակն ընդլայնել և խորացնել հարցազրույցի ընթացքում՝ շեղվելով հարցերի մշակված հաջորդականությունից:

Ուսումնասիրության ընթացքում որակական հարցազրույցներ են անցկացվել հաշմանդամություն ունեցող և առանցքային տեղեկատու հանդիսացող անձանց հետ: Թե՛ հաշմանդամություն ունեցող անձինք, թե՛ առանցքային տեղեկատուներն ընտրվել են ձնակույտի մեթոդով: Որակական մեթոդների կիրառման նպատակն է հասկանալ, թե խտրականության ինչ դրսևորումների են հանդիպում հաշմանդամներն իրենց կենսագործունեության ընթացքում և պաշտպանության ինչ մեխանիզմներ են առկա: Ընդհանուր առմամբ իրականացվել են թվով 8 հարցազրույցներ:

3. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր հետազոտություն սկսվում է փաստաթղթերի վերլուծությունից, ինչը թույլ է տալիս ծանոթանալ հետազոտության օբյեկտին, միևնույն ժամանակ մշակել հետազոտության նպատակներն ու խնդիրները: Փաստաթղթերի դերում կարող են հանդես գալ հիմնախնդրի վերաբերյալ արված հետազոտությունները և իրականացված վերլուծությունները, ոլորտի իրավական կարգավորումները, վիճակագրական նյութերը, հաշվետվությունները և այլն:

Այս զեկույցի պատրաստման ընթացքում ուսումնասիրությանն առնչվող անհրաժեշտ տեղեկատվությունը լրամշակվել և համալրվել է հետևյալ աղբյուրներով՝

1. Ձեռնարկ. իրավական պաշտպանության եղանակները խտրականության գործերով: Եվրոպայի խորհուրդ, Արա Ղազարյան, Եր., 2015թ.:
2. «Հայաստանում աշխատաշուկայի երիտասարդակենտրոն և գենդերազգայուն հետազոտություն»: «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպություն, 2018:
3. Տարեկան հաղորդում 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին:
4. ՀՀ ՎԿ եռամսյակային տվյալներ երկրի սոցիալ-տնտեսական վիճակի մասին:
5. ՀՀ օրենքը կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին, «Հաշմանդամություն ունեցող անձանց կարիքների գնահատման մասին» ՀՀ օրենքի նախագիծ, «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» ՀՀ օրենքի նախագիծ:

Ընտրանք

Հետազոտության մասնակիցներն ընտրվել են ոչ պատահական ընտրանքով՝ նպատակաուղղված կերպով, այն է՝ հարցման հղումն ուղարկվել է նախապես Զնակույտի մեթոդով հայտնաբերված հաշմանդամություն ունեցող անձանց[2]: Թեպետ ընտրանքը ներկայացուցչական չէ, սակայն ստացված տվյալները հուսալի են և կարող են հիմք հանդիսանալ հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրականության տարբեր ձևերի բացահայտման հարցում: Բացի այդ, ընտրանքում ներառված անձինք ըստ հաշմանդամության խմբերի հավասարաչափ են բաշխված (տե՛ս Գրաֆիկ 1):



Գրաֆիկ 1.Հարցվածներն ըստ հաշմանդամության խմբերի



Գրաֆիկ 2. Հարցվածների հաշմանդամությունն՝ ըստ ֆունկցիոնալ խանգարումների

Միևնույն ժամանակ, տվյալները համադրվել են խորին հարցազրույցներից ստացված տվյալների, վիճակագրական տվյալների և կատարված այլ հետազոտությունների արդյունքների հետ, ինչն ապահովել է ուսումնասիրության բազմակողմանիությունն ու հիմնավորվածությունը (տրիանգուլյացիան[3]):

Հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրականության բացառման իրավական հիմքերը

Հաշմանդամների նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման և բացառման հարցում Հայաստանը ստանձնել է միջազգային մի շարք պարտավորություններ, ինչպես նաև իրականացվում են խտրականության բացառման և հաշմանդամների համար ողջամիտ հարմարեցման պայմանների ապահովման, սոցիալական ներառմանն ուղղված միջոցառումներ:

Հաշմանդամների իրավունքների պաշտպանությանն են նվիրված մի շարք միջազգային, ինչպես նաև ներպետական իրավական փաստաթղթեր: Այսպես, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 2006թ.-ի դեկտեմբերի 13-ին ընդունած «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիան Հայաստանը վավերացրել է 2010թ.-ին: Ընդ որում հաշմանդամության հիմքով խտրականության սահմանումը տրված է ՄԱԿ-ի կոնվենցիայի 2-րդ հոդվածի 3-րդ մասում, որտեղ գրված է. *«Խտրականություն հաշմանդամության պատճառով» նշանակում է հաշմանդամության պատճառով*

[2] Առցանց հարցմանը հիմնականում մասնակցել են «Ունիսոն» ՀԿ-ի և գործընկեր այլ կառույցների հետ առնչություն ունեցող անձանց շրջանում, ում ուղարկվել է հարցման հղումը: Հարցումը հասանելի է եղել նաև ֆեյսբուքյան համապատասխան հարթակներում և համացանցում 2021թ. փետրվար, մարտ ամիսներին:

[3] «Տրիանգուլյացիա» տերմինը վերաբերում է տեղեկատվության բազմակի տեսությունների, աղբյուրների կամ տիպերի կամ էլ վերլուծությունների տեսակների կիրառմանը՝ հաստատելու և հիմնավորելու որևէ գնահատական:

ցանկացած տարբերակում, բացառում կամ սահմանափակում, որոնց նպատակն է սահմանափակել կամ նվազագույնի հասցնել մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ճանաչումը, կիրառումը կամ դրանցից օգտվելը քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային կամ ցանկացած այլ ոլորտում՝ մյուսների հետ հավասար հիմունքներով: Այն ընդգրկում է խտրականության բոլոր ձևերը՝ ներառյալ անհրաժեշտ հնարավորությունների տրամադրման մերժումը:

«ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» օրենքը, ընդունված 1993թ.-ին, հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ հիմնական օրենքներից է: Այնուհետև, հաշվի առնելով օրենքում առկա մի շարք բացթողումներ և թերություններ, 2015թ.-ին մշակվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» օրենքի նախագիծը, որն այնուհետև բազմաթիվ փոփոխությունների է ենթարկվել:

Հաշվի առնելով առկա օրենսդրական կարգավորումների բացերն ու թերությունները ներկա պահին ՀՀ ԱՍՀՆ-ն ներկայացրել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» և «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» և հարակից օրենքներում փոփոխություններ կատարելու մասին նախագծերի փաթեթը, որոնք առաջին ընթերցմամբ ընդունվել են Ազգային Ժողովի կողմից: Ըստ այդմ՝ փորձ է արվում անհրաժեշտ իրավական հիմքեր ստեղծել հաշմանդամություն ունեցող անձանց՝ հասարակական կյանքի բոլոր ոլորտներում հավասար հնարավորությունների և մատչելի պայմանների ստեղծման, խտրականության դրսևորումների վերացման, գնահատված կարիքին համարժեք հասցեական ծառայությունների մատուցման համար: Բացի այդ, «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» ՀՀ օրենքով այսուհետ նախատեսվում է փոխարինել բժշկասոցիալական փորձաքննության համակարգն անձի ֆունկցիոնալության գնահատման համակարգով: Օրենքի նպատակն է նոր մոդելի ներդրմամբ՝ անձանց գնահատված կարիքներին համարժեք ծառայություններ որոշելն ու մատուցելը, քանի որ գործող համակարգն ունի առավելապես բժշկական մոտեցում: Անձի ֆունկցիոնալության գնահատման արդյունքում հաշմանդամության խմբերի փոխարեն (1-ին, 2-րդ, 3-րդ խումբ և հաշմանդամ երեխա) սահմանվելու են անձի ֆունկցիոնալության սահմանափակման աստիճաններ՝ թեթև, միջին, ծանր, խորը: Ըստ այդմ՝ հաշմանդամության գնահատման հիմքում կդրվեն ոչ միայն առողջական խնդիրներն, այլև՝ անձի հասարակական կյանքի գործունեության ու մասնակցության միջավայրային գործոնները:

Թեպետ օրենսդրական դաշտում տեղի ունեցող փոփոխությունները հիմնականում դրական են, այդուհանդերձ այսօր Հայաստանում դեռևս չլուծված խնդիրներից է հաշմանդամների սոցիալական ներառումն ու ողջամիտ պայմանների ստեղծումը լիարժեք կյանքի ապահովման նպատակով: Ըստ էության «ողջամիտ հարմարեցում» սկզբունքը[4] նշանակում է, որ հաշմանդամներն իրենց կենսագործունեության ընթացքում պետք է ապահովված լինեն ազատ տեղաշարժվելու և իրենց կարիքներին համապատասխան միջավայր ունենալու պայմաններով[5]: Օրինակ՝ գործատուն այլ հավասար պայմաններում, եթե պետք է աշխատանքի ընդունի հաշմանդամություն ունեցող անձի կամ այլ թեկնածուի, առաջինի պարագայում պարտավոր է աշխատանքային պայմաններ ստեղծել թեկնածուի կարիքներին համաձայն, այն է՝ անարգել տեղաշարժման, աշխատանքի համար անհրաժեշտ պարագաների, միջավայրի մատչելիության ապահովման և այլնի ուղղությամբ: Այս առումով, միջպետական և միջազգային համաձայնագրերից բացի, ՀՀ Սահմանադրության մեջ ևս ամրագրված է խտրականության արգելքը (հոդված 29): Հաշմանդամների նկատմամբ խտրականության վերացմանն է առնչվում նաև «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքը (2013 թ.), որը կարգավորում է կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովումը քաղաքականության, պետական կառավարման, աշխատանքի և զբաղվածության, ձեռնարկատիրության, առողջապահության, կրթության և այլ ոլորտներում՝ հաշվի առնելով նաև հաշմանդամ կանանց կարիքները: Ընդ որում օրենքում կիրառվում է

[4] Ամրագրված է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի Կոնվենցիայի 2-րդ և 5-րդ հոդվածներով, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրով, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 14-րդ հոդվածով

[5] Ձեռնարկ. իրավական պաշտպանության եղանակները խտրականության գործերով: Եվրոպայի խորհուրդ, Արա Ղազարյան, Եր., 2015թ.:

«գենդերային խտրականություն» հասկացությունը, որն արգելում է սեռի հիմքով խտրական վերաբերմունքը. օրենքը նպաստում է գենդերային հավասարության մշակույթի զարգացմանը և գենդերային կարծրատիպերի վերացմանը, որոնք բխում են խտրական պրակտիկայից, այն պնդում է գենդերային հավասարության ազգային մեխանիզմի ստեղծման կարիքը:

Բացի նշված օրենսդրական կարգավորումներից, հետազոտության մասնակիցների կարծիքով անհրաժեշտ է առանձին որոշումների և համաձայնագրերի միջոցով խթանել հաշմանդամների զբաղվածությունը պետական կառույցներում՝ սահմանելով կենսունակ քվոտային համակարգ: Խնդիրը պատճառաբանում են այն փաստով, որ մասնավոր կառույցներում հաշմանդամների շահերի պաշտպանությունն անտեսված է, իսկ պետական աշխատողների համար ստեղծված են բոլոր երաշխիքները կատարած աշխատանքի դիմաց պատշաճ վճարվելու, առողջական և սոցիալական պաշտպանություն ունենալու և օրենքից բխող այլ դրույթների պահպանման առումով: Կարիք կա նաև կրթական, մշակութային, սպորտի և գիտության ոլորտներում հաշմանդամների նկատմամբ խտրականությունը վերացնելուն ուղղված համալիր միջոցառումների անցկացման: Այս առումով ներառականությունը շատերի համոզմամբ կրթության ոլորտում իր դրական արգասիքներն է ունեցել, ինչն անհրաժեշտ է նաև գործարկել այլ ոլորտներում: Դիցուք՝ Բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության նախարարությունը կարող է դառնալ հաջորդ ռահվիրան ԱԻՆ-ից հետո:

Հարցվածների համոզմամբ, ներառականության քաղաքականությունը նպաստում է նաև հասարակության կրթությանն ու իրազեկվածության բարձրացմանը, թե ինչպես շփվել հաշմանդամություն ունեցող անձանց հետ, ինչպես խուսափել խտրականությունից և տարբերակման արատավոր երևույթներից: Բացի այդ, այն մեծացնում է հաշմանդամների իրավունքների պաշտպանվածությունն ու դրականորեն ազդում միջավայրի վրա:

Հարկ է նաև նշել, որ հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ անխտրական միջավայրի ստեղծան հարցում անգնահատելի ավանդ ունեն տարբեր ՔՀԿ-ներն իրենց ակտիվ գործունեությամբ՝ ուղղված խտրականության տարբեր ձևերի վերացմանը: Բայց և այնպես այս հարցում անհրաժեշտ են երկուստեք համագործակցություն ՔՀԿ-ների և պետական ինստիտուտների միջև, քանի որ հաշմանդամություն ունեցող անձինք դեռևս հասարակության ամենամեկուսացված խմբերից են:

Այսպիսով հաշմանդամություն ունեցող անձինք հասարակության մեջ շարունակաբար հանդիպում են խտրականության.

- Օրենքները և պետական քաղաքականությունը չեն ապահովում մատչելի միջավայր հաշմանդամների լիիրավ կյանքի և գործունեության ապահովման համար:
- Տնտեսական և սոցիալական խտրականությունը հաշմանդամներին զգալիորեն ավելի քիչ հնարավորություններ է ընձեռում աշխատանքի և տնտեսական ակտիվության բարձրացման համար:
- Հաշմանդամներն աշխատաշուկայում հանդիպում են չարաշահման և շահագործման դեպքերի, որի հիմնական պատճառը հասարակության մեջ գոյություն ունեցող ընդգծված խտրականությունն է:
- Հաշմանդամություն ունեցող անձինք հաշմանդամության հիմքով խտրականությունից զատ հանդիպում են այլ հիմքով խտրական վերաբերմունքի, դիցուք՝ սեռով, տարիքով և սոցիալական կարգավիճակով պայմանավորված:
- Հաշմանդամներն հանդիպում են խտրականության՝ արտահայտված ոչ միայն հասարակության մեջ բացասական վերաբերմունքով, բացառմամբ, տարբերակմամբ, այլև արդյունավետ պետական քաղաքականության և օրենսդրության բացակայությամբ, որի պատճառով չեն իրացվում իրենց իրավունքներն առողջապահության, կրթության, մշակույթի և այլ ոլորտներում:

Հաշմանդամություն ունեցող անձանց ներկա վիճակը Հայաստանում



Գրաֆիկ 3. Հաշվառված հաշմանդամների թվաքանակն ըստ տարիքային խմբերի, 2020թ. տարեվերջ



Գրաֆիկ 4. Հաշվառված հաշմանդամների թվաքանակն ըստ հաշմանդամության խմբերի, 2020թ. տարեվերջ (մարդ)



Գրաֆիկ 5. Հաշվառված հաշմանդամների թվաքանակն ըստ հաշմանդամության պատճառների, 2020թ. տարեվերջ (մարդ)

Թեպետ Հայաստանում հաշմանդամների նկատմամբ խտրականության բացառմանն ուղղված որոշակի միջոցառումներ են իրականացվում պետական քաղաքականության և օրենսդրական կարգավորումների շրջանակներում, միևնույն է իրավիճակը դեռևս մնում է անփոփոխ՝ չնչին դրական տեղաշարժերով, որոնք դրվագային բնույթ ունեն: Խտրականության վերացումը և հաշմանդամների համար պատշաճ պայմանների ապահովումը դեռևս մեր երկրի կարևորագույն խնդիրներից են: Ընդ որում ուսումնասիրությանը մասնակցած հաշմանդամները գտնում են, որ պետական քաղաքականության մոտեցումները պետք է փոխվեն. հավասար պայմանների ստեղծմանը զուգահեռ անհրաժեշտ է պետականորեն ստեղծել երաշխիքներ հասարակության մեջ հաշմանդամների սոցիալ-տնտեսական ներգրավվածությունն ու ակտիվությունն ապահովելու համար: Դիցուք՝ աշխատանքի ընդունելիս, գործատուն հավասար մեկնարկային հնարավորություններ տալով բոլորին՝ հակված է հավասար դիտարկել բոլորի հմտություններն ու գիտելիքները, մինչդեռ, օրինակ, թեստավորում անցնելիս հաշմանդամներից թեստը

հանձնելու համար հնարավոր է հավելյալ ժամանակ ու ջանքեր պահանջվեն: Բացի այդ պայմանավորված այլ կարիքներով՝ հնարավոր են այլ խնդիրներ ևս ծագեն: Հետևաբար շատերը համոզված են, որ հավասարության սկզբունքը, որքան էլ տարօրինակ չհնչի, անհավասարության հիմքով է դրվում, այսինքն՝ հաշմանդամները չունենալով միևնույն մեկնարկային հնարավորությունները, պետք է մրցեն մյուսների հետ հավասար պայմաններում աշխատաշուկայում, տնտեսական, կրթական, սոցիալական հարաբերություններում և այլն: Հետևաբար իրենց ունեցած դժվարություններին նաև գումարվում են այլ գործոններ՝ տնտեսության վատ վիճակ, հարկային և մաքսային դժվար ընթացակարգեր և այլն:
Ասվածը վերաբերում է նաև միջավայրի հարմարեցմանը, որն անհրաժեշտ է իրականացնել բոլոր համայնքային ծառայությունների, սոցիալ-տնտեսական և քաղաքական միջոցառումների կազմակերպման ժամանակ:
Հայաստանում հաշմանդամների ներկա վիճակի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանց նկատմամբ վերաբերմունքն ու առկա քաղաքականությունները հնարավոր չէ համարել անխտրական և/կամ հավասար: Ընդ որում խտրականությունը դրսևորվում է նաև գենդերային հիմքով, այսինքն՝ պատահում են նաև կրկնակի խտրականության դեպքեր:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ Հայաստանում բացակայում է պատշաճ պետական վիճակագրություն, որը ցույց կտար, թե որ ոլորտներում են առավել ներգրավված հաշմանդամություն ունեցող անձինք և որքանով են նրանց յուրահատուկ կարիքները ներկայացված այս կամ այն պետական ծրագրերում:
Այդուհանդերձ, հիմք ընդունելով պետական վիճակագրական տվյալները՝ ներկայացնենք ընդհանուր պատկերը: Այսպես, Հայաստանում հաշվառված հաշմանդամների ընդհանուր թիվը 2020թ. վերջին կազմել է 191 827 մարդ, նրանից կանայք՝ 92 097 (48%), իսկ առաջին անգամ հաշմանդամ ճանաչվածների թվաքանակը 11555 է: Ընդ որում նախորդ տարի միևնույն ժամանակահատվածի համար հաշմանդամների թիվը եղել է 192 013, այսինքն՝ այն աճել է 814-ով (0,4%-ով): Հետաքրքրական է, որ հաշմանդամ երեխաների զգալի մասն արական սեռի են (69%): Ըստ որում հաշմանդամների շրջանում ևս տղամարդիկ գերակշռում են կանանց: Ըստ աշխարհագրական դիրքի, եթե դիտարկենք, կնկատենք, որ հաշմանդամների թիվն առավել մեծ է Երևանում՝ 57 026 մարդ, հաջորդիվ Շիրակի մարզում (18 860) և Լոռիում (18 826), իսկ նվազագույնը՝ Վայոց Ձորի մարզում է (4 340):



Գրաֆիկ 6. Հաշմանդամների թիվն ըստ մարզերի, 2020թ. տարեվերջ

Ընդ որում, ինչպես կարելի է նկատել Գրաֆիկ 4-ից, ըստ հաշմանդամության խմբերի գերակշռում են 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք: Իսկ եթե դիտարկենք հաշմանդամների թվակաքանակն

ըստ հիվանդությունների, ապա ամենամեծ թվաքանակով առաջին երեք հիվանդություններն են՝ **արյան շրջանառության համակարգի** (55858), **հոգեկան ու վարքի խանգարումների** (21103) և **աչքի** (15352) հիվանդությունները: Ուսումնասիրության շրջանակներում շատ հարցվողներ նշեցին, որ տեսողության խնդիրներ ունեցող անձանց համար հանրային վայրերն ու միջավայրը դեռևս մնում են անհասանելի և չհարմարեցված: Առկա չեն ոչ միայն Բրայլի տառատեսակով հատուկ ցուցանակներ և/կամ ուղղորդող վահանակներ, ձայնային ազդանշաններ և այլն, այլև տարբեր պետական կառույցներում, սոցիալական, առողջապահական ծառայություններ մատուցող կենտրոններում, մշակութային և հանրային վայրերում չկան տեխնոլոգիական բավարար լուծումներ տեսողության խնդիրներ ունեցող անձանց համար:

«Առավել կարևորը հաշմանդամների համար ֆինանսական անբավարար խտրական վիճակն է Հայաստանում: Կինդրեի հաշմանդամության մեկ ամսվա թոշակով որևէ պետական պաշտոնյա մեկ ամիս ապրեր, հաստատ հաշմանդամություն ձեռք կբերեր: Բացի դա, հաշմանդամների նկատմամբ խտրական, ֆաշիստական, մոտեցում է նաև հաշմանդամներին տեսակավորելը (օրինակ պատերազմի) և ըստ այդմ արտոնություն տալը: Թոշակների մեծ բևեռվածություն կա տարբեր խմբերի թոշակառուների միջև»:

Հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրները թեպետ բազմազան են և տարաբնույթ, սակայն շատերի համար Հայաստանում ամենաարդիական հիմնախնդիրը հաշմանդամների սոցիալական և տնտեսական ներառման ծրագրերի անարդյունավետությունն է: Չնայած պետությունն իրականացնում է ծրագրեր աշխատաշուկայում հաշմանդամների մասնակցությունը մեծացնելու համար, սակայն այդ ծրագրերի գերակշիռ մեծամասնությունը չունի կայունության բարձր ցուցանիշ: Այսինքն, հաճախ գործատուներն օգտվելով որոշակի ժամանակահատված պետական արտոնություններից, այնուհետև ազատում են հաշմանդամություն ունեցող աշխատողներին և փոխարինում նրանց նորերով: Շատ են լինում նաև դեպքերը, երբ հաշմանդամներն աշխատաշուկայում շահագործման և չարաշահման են ենթարկվում. չեն վճարվում կատարած աշխատանքի համար, գործատուն վճարում է աշխատավարձն ուշացումներով և այլն, ինչի մասին փաստեցին նաև մեր ուսումնասիրության մասնակիցները:

«... շահագործումը հաշմանդամների հանդեպ ավելի շատ է: Ես տանից եմ աշխատում, մի քանի սեփականատերեր են եղել, որ հեռահար շփում է եղել ու այնպես է եղել, որ ես տանն եմ աշխատում ու իմ աշխատանքի արդյունավետությունը կարող է ցածր լինել ու խաբել են ինձ: Սա ոչ թե խտրականություն է, այլ չարաշահում է: Ես տանից եմ աշխատում և որևէ մեկին չեմ ասել, որ հաշմանդամություն ունեմ ու չեմ շահարկել այդ փաստը, բայց եթե ասեի, դա իրենք իմ դեմ կօգտագործեին: Մարդկանց մոտ էդ տգետ կարծիքը կա, որ վայ դու ինչ կարաս անես, բացի այդ հաշմանդամություն բառից իրենք վախենում են»:

Եթե դիտարկենք հաշմանդամների տնտեսական ակտիվությունը, կարելի է համոզվել, որ այն շատ ցածր է: Այսպես, աշխատուժից դուրս բնակչության թվաքանակն աշխատանքային ռեսուրսների թվաքանակի նկատմամբ 2019թ. կազմել է 69,3%, որից տղամարդիկ՝ 60,7%, իսկ կանայք՝ 72,8%: Այսինքն՝ հաշմանդամ կանանց տնտեսական ակտիվությունն առավել ցածր է: Ընդ որում՝ քաղաքի և գյուղի կտրվածքով, գյուղում տնտեսական ակտիվությունն ավելի բարձր է, քանի որ աշխատուժից դուրս բնակչության մասնաբաժինը քաղաքում ավելի բարձր է՝ 73,7%, քան գյուղում՝ 62%: Պատճառն այն է, որ գյուղում հաշմանդամներն առավել հաճախ են ներգրավվում գյուղատնտեսական աշխատանքներում և/կամ ինքնազբաղվածություն ունեն: Ուսումնասիրությունները ցույց են տալիս նաև, որ գյուղաբնակ վայրերում և ՀՀ մարզերում հաշմանդամություն ունեցող անձանց դժվարությունները կրկնակի անգամ ավելանում են մատչելի ենթակառուցվածքների բացակայության պայմաններում:

Միջավայրի մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար



Գրաֆիկ 7. Միջավայրի հարմարեցում հաշմանդամների կարիքներին



Գրաֆիկ 8. Հաշմանդամների ակտիվության և կենսաապահովման միջոցները

Երկրի գրեթե ողջ տարածքում հաշմանդամների համար ստեղծված պայմանները լիովին չեն գոհացնում հետազոտության մասնակիցներին: Միևնույն ժամանակ հաշմանդամության որոշ տեսակներով պայմանավորված՝ հավելյալ հարմարեցումների անհրաժեշտություն չի նկատվում:

Այսպես, հաշմանդամություն ունեցող անձանցից նրանք, ովքեր նշել են, որ միջավայրն ընդհանրապես հարմարեցված չէ իրենց կարիքներին, 30%-ը գյուղաբնակ են: Շատերի համոզմամբ, նույնիսկ քաղաքում շենքերի շքամուտքերի և այլ շինությունների թեքահարթակներն առհասարակ անցանելի չեն և որոշ դեպքերում նույնիսկ վտանգավոր են: Հետևաբար ոչ միայն գյուղաբնակ, այլև քաղաքային բնակավայրերում խնդիրն արդիական է: Հարցվողներից նրանք, ովքեր գտնում են, որ միջավայրն ընդհանրապես հարմարեցված չէ, 65%-ը կազմում են հենաշարժողական ֆունկցիայի խանգարում ունեցող անձինք, և քիչ մասը՝ տեսողության և լսողության խնդիրներ ունեցող հաշմանդամներն են: Այս հարցում չկան ընդգծված տարբերություններ առօրյայում հաշմանդամների ինքնուրույն կենսագործունեության համեմատությամբ: Այսինքն՝ նույնիսկ նրանք, ովքեր ինքնուրույն կարողանում են ապահովել իրենց կենսագործունեությունը, գտնում են, որ միջավայրը հարմարեցված չէ ոչ միայն իրենց, այլ ընդհանրապես հաշմանդամության այլ տեսակներ ունեցող անձանց համար: Բացի այդ, հանրության շրջանում առկա է ցածր իրազեկվածություն, թե ինչպես պետք է հաղորդակցվել հաշմանդամների հետ:

«Կցանկանայի, որ քաղաքում մասնագիտական գրականությունը հասանելի լիներ խոսող գրքերի տեսքով և հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերվեին հավասարը-հավասարին առանց կարեկցանքի և վախվորած մոտենալու»:

Ինչպես կարելի է նկատել հաջորդ գրաֆիկից, հանրային միջավայրը մեծապես անհասանելի է հարցված հաշմանդամների համար: Այսպես, շատերի համար առօրյա զբոսանքը հանրային վայրերում հնարավոր չէ՝ բացակայող հարմարությունների պատճառով: Մյուս կարևոր խնդիրը վերաբերում է հաղորդակցությանը՝ տեղեկացված լինելու իրավունքին, որն ըստ հարցված փորձագետի կարևորագույներից է մեր երկրում: Հաշմանդամություն ունեցող անձանցից շատերի համար կարևոր տեղեկատվությունը, թե որտեղ և ինչպես կարող են ստանալ սոցիալական աջակցություն, մասնակցել մշակութային, սոցիալական և այլ համայնքային միջոցառումներին, դիմել իրավունքների պաշտպանության համար և/կամ ստանան իրավական խորհրդատվություն, հասանելի չէ, ինչն էլ գերակշիռ մեծամասնության դեպքերում պատճառ է դառնում հասարակական գործընթացներում մասնակցության նվազմանը, իրավունքների պաշտպանության ցածր աստիճանի և շղթայաբար նաև հանգեցնում է հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրականության ավելացման և նրանց մեկուսացման: Ամենամեծ խնդիրներից է նաև տրանսպորտային մատչելիությունը: Հարցվածների 60%-ը ընդհանրապես բավարարված չէ

տրանսպորտային միջոցների հարմարություններից, որն իր հերթին հանգեցնում է հաշմանդամություն ունեցող անձանց մոտ տնտեսական և սոցիալական ակտիվության անկմանը:
Լսողության խնդիրներ ունեցողների համար հանրային տրանսպորտում բացակայում են կանգառների անվանումները ներկայացնող լուսադիոդային էկրաններ: Բացակայում են նաև տեսողության խնդիրներ ունեցող անձանց համար լուսաձայնային սարքերը, որոնք քաղաքացիներին հնարավորություն կտան տեղեկանալու հաջորդ կանգառի և գտնվելու վայրի մասին: Միևնույն ժամանակ խուլ ու համր մարդկանց համար հանրային տարածքներում բացակայում են տեսահաղորդակցման հնարավորությամբ սարքերը:
Այսպես, ինչպես կարելի է համոզվել ստացված տվյալներից, փողոցներում, անցումներում, բնակելի և հասարակական նշանակություն ունեցող շենք-շինություններում բացակայում են հաշմանդամների կարիքերին համապատասխան հարմարությունները. շենք, շինությունների մուտքերը հիմնականում հարթ չեն, չկան թեքահարթակներ և վերելակային հարմարություններ, ապահովված չէ նաև տրանսպորտի մատչելիությունը:



Գրաֆիկ 9. Հարցվածների բավարարվածությունը քաղաքում/համայնքում առկա պայմաններից

Հարցվածների 44%-ի համար խնդրահարույց են նաև սոցիալական ենթակառույցների, տրանսպորտային, առողջապահական, կրթական, մշակութային, սպորտային, և այլ հիմնարկների մատչելիությունը: Այսպիսով, հաշմանդամություն ունեցող անձանց ակտիվ կենսագործունեության համար բարենպաստ միջավայրի ձևավորումը ամենակարևոր հրամայականներից է մեր օրերում:

Հարցվածների կարիքների քարտեզագրում

Հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին համապատասխան և մատչելի միջավայրի ապահովումը հարցվածների մեծամասնության համար կարող է ոչ միայն վերացնել սոցիալական մեկուսացումը, այլև ավելացնել սոցիալական ներառման հնարավորությունները:
Այս առթիվ հարցվածները նշել են նաև, թե իրենց որ կարիքներն են պահանջում հրատապ ուշադրություն. վերջիններս ներկայացնում ենք ստորև բերված աղյուսակի տեսքով՝ ըստ հաճախականության:

ԿԱՐԻՔՆԵՐ	Հաճախականություն
Աշխատանքի և զբաղվածության ապահովում	17
Շենք/շինությունների թեքահարթակներ, շքամուտքերի մատչելիություն	10
Հարմարեցված, մատչելի և/կամ անվճար տրանսպորտային միջոցներ	9
Անվճար բուժօգնություն, առողջապահական ծառայություններ, վիրահատություն	8
Միջավայրի մատչելիություն	5
Ֆինանսական աջակցություն	4
Հատուկ ծառայություններ (լոգոպեդիա, ֆիզիոթերապիա, սոցիալական մանկավարժի ծառայություններ և այլն)	3
Օժանդակ սարքավորումների տրամադրում	3
Հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար առանձին հարմարեցված տրանսպորտ	3
Օգնական, ուղեկցորդ սոցիալական և այլ ծառայություններ մատուցող կառույցներում հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար	3
Սպորտային, մարզական խմբակներ, հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված դահլիճներ	3
Սոցիալապես անապահով հաշմանդամների համար պետական աջակցության ծրագրերի ավելացում	3
Կրթություն, վերապատրաստում և մասնագիտական ուսուցում	2
Շինությունների աստիճաններին կից բազրիքների տեղադրում	2
Մարզերում պրոթեզաօրթոպեդիկ պարագաների տրամադրում	1
Ձմռանը հանրային վայրերում զբոսանքի հնարավորություն, հարմարություններ	1
Վերականգնողական ծրագրերի առկայություն	1
Իրավաբանական խորհրդատվություն	1
Երթուղային տրանսպորտի թվաքանակի ավելացում մարզերում	1
Պրոթեզավորման որակավորված մասնագետների առկայություն	1
Հանրային սանհանգույցների առկայություն քաղաքում	1
Բժշկական հաստատություններում առցանց հերթագրման համակարգի ներդրում	1
Բնակարանի կամ կացարանի ապահովում	1
Դեղորայքով ապահովում	1
Խաղահրապարակներ	1
Էլեկտրական սայլակ	1
Հարկային և տնտեսական արտոնություններ ձեռներեցությամբ զբաղվողների համար	1
Վերականգնողական ծառայություններ	1
Բանկոմատների հարմարեցում	1
ժեստերի լեզվի թարգմանություն, համաժամանակյա լուսագրերի առկայություն	1

Աղյուսակ 1. Հարցվածների հրատապ կարիքները

Մասնակցությունը հանրային կյանքին



Գրաֆիկ 10. Հարցվածների մասնակցությունն ընտրություններին



Գրաֆիկ 11. Ընտրությունների ժամանակ հաշմանդամների քվեարկության գաղտնիությունն ապահովելու համար ստեղծված պայմաններն ըստ հարցվածների

Հարցվածների պնդմամբ, իրենք հաճախ չեն մասնակցում նույնիսկ ընտանիքում կարևոր որոշումների կայացմանը, մեծ դժվարություններ են ունենում գործատուների հետ շփման ժամանակ և խտրականության են հանդիպում կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտներում՝ կրթության, աշխատանքի, ընտանիքի անդամների, ընկերների շրջապատում և այլն: Հաշմանդամության պատճառով շատերը հաճախ են հանդիպում ծաղրական վերաբերմունքի, արհամարհանքի ու անտեսման:

«Շրջապատում ձեռք են առնում: Օրենքը պետք է փոխվի հաշմանդություն ունեցող անձանց համար, որ տեսնում են աչքը ծուռա, կամ թերություն ունի, չեն հասկանում, որ մարդը գիտակից մարդ է: Լավ կլինի, որ հաշմանդամ մարդուն ձեռք առնելիս տուգանվեն կամ պատժվեն:

Ֆիզիկական միջավայրի տեսանկյունից հարցվածների մեծամասնությունն այն կարծիքին է, որ մայրաքաղաքը դեռևս անմատչելի է և միջավայրը հարմարեցված չէ հաշմանդամություն ունեցող անձանց համար. մայրաքաղաքի համեմատությամբ ավելի անմատչելի են մարզային քաղաքներն ու համայնքները: Մյուս կողմից էլ հարցվածների մի մասը նկատում է դրական տեղաշարժեր հանրության վերաբերմունքի առումով նախորդ տարիների համեմատ: Այսինքն՝ հասարակությունն այլ կերպ է վերաբերվում հաշմանդամներին, և վերջիններս էլ փոխել են իրենց վերաբերմունքը սեփական կյանքի հանդեպ: Վերջին տարիների կտրվածքով, երիտասարդների դիտարկմամբ ուսումնական հաստատություններում հաշմանդամներն ավելի ակտիվ են դարձել, ինչը նպաստել է աշխատաշուկայում դրական տեղաշարժերի առաջացման: Այդուհանդերձ կան կարծիքներ, որ աշխատաշուկայում խտրականությունը վառ արտահայտված չէ, քանի որ հաշմանդամների գերակշիռ մեծամասնությունը չի կարողանում աշխատանք գտնել հմտությունների և կրթության բացակայության պատճառով: Այսինքն՝ խնդիրներն ավելի շատ կապված են հաշմանդամների կրթության ցածր որակի և բացակայող հմտությունների հետ:
Ուսումնասիրության նպատակներից էր նաև հասկանալ, թե որքանով են հաշմանդամություն ունեցող անձինք ներգրավված երկրում տեղի ունեցող կարևոր սոցիալ-տնտեսական, քաղաքական որոշումների կայացման գործընթացներին, ինչն անխտրական և ներառական միջավայրի ապահովման կարևոր չափանիշներից է: Ինչպես երևում է գրաֆիկ 12-ից, հարցվածների գրեթե կեսը մասնակցում է ՏԻՄ և համապետական ընտրություններին: Ընդ որում չկա էական տարբերություն կանանց և տղամարդկանց մասնակցության առումով: Հարցվածներից նրանք, ովքեր նշել են, որ մասնակցում են ընտրություններին, կեսը տղամարդիկ են, կեսը՝ կանայք: Հետաքրքրական է, որ ընտրություններին չմասնակցողների 78% քաղաքաբնակ հարցվողներն են, այսինքն՝ գյուղական բնակավայրերում հաշմանդամություն ունեցող անձանց քաղաքական մասնակցությունն էականորեն բարձր է:
Վերջին համապետական ընտրությունների ժամանակ մի շարք ՔՀԿ ներկայացուցիչներ մշակեցին մեթոդաբանական ուղեցույցներ, թե ինչպես պետք է կազմակերպել քվեարկության ընթացքն ու ապահովել

քվեարկության գաղտնիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար: Սակայն 2018 և 2019 թթ. ընթացքում ՀՀ ՄԻՊ գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան զեկույցում մանրամասնորեն անդրադարձ է կատարվում թե՛ ընտրական օրենսգրքում առկա բացթողումներին, թե՛ ընտրությունների կազմակերպման ու անցկացման ընթացքում ծագած խնդիրներին: Այսպես, 2018թ.-ին տեղի ունեցած ընտրություններին հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքի հիմնական խախտումներն արձանագրվել են ՔՀԿ-ների կոմից, որտեղ ակտիվ դերակատարություն է ունեցել «Ագաթ» ՀԿ-ն: 2018 թ.-ի խորհրդարանական ընտրությունների ընթացքում «Ընտրություններ բոլորի համար» ծրագրի շրջանակում «Ագաթ» ՀԿ-ի կողմից բացահայտված հիմնական խախտումներն ընտրատեղամասերի անմատչելիությանն են վերաբերել: «*Դիտարկված ընտրատեղամասերի 6%-ը մուտքի թեքահարթակի կարիք չի ունեցել, սակայն անվասայլակով տեղաշարժվող մարդիկ իրենց ընտրական իրավունքն իրացնելիս բախվել են դժվարության շենքերի ներսում, որոնց 10%-ում քվեարկության սենյակը տեղակայված է եղել երկրորդ հարկում կամ նկուղային մասում և վերելակներ չեն եղել: Դիտորդները նաև նշել են սանհանգույցի անմատչելիության խնդիրը: Ավելին, ընտրատեղամասերի մեծ մասում չեն եղել խոշորացույցեր՝ նախատեսված տեսողության խնդիրներ ունեցող մարդկանց համար, իսկ որոշ ընտրատեղամասերում ոչ բավարար լուսավորության պատճառով վերջիններս դժվարացել են ինքնուրույն քվեարկել: Միևնույն ժամանակ, մի շարք ընտրատեղամասերում քվեախցիկները տեղադրված են եղել պատին շատ մոտ, որի պատճառով անվասայլակով տեղաշարժվող մարդը չէր կարողանա ինքնուրույն քվեարկել*»:

Այսպես, ինչպես կարելի է նկատել Գրաֆիկ 11-ից, հարցվածների մի մասը (37%) կարծում է, որ ընտրությունների ժամանակ ստեղծված չեն եղել քվեարկության գաղտնիության ապահովման բոլոր պայմանները, կամ դժվարացել է պատասխանել այդ հարցին (27%):



Գրաֆիկ 12. Հարցվողների մասնակցությունը որոշումների կայացմանը (մարդ)

Գրաֆիկ 12-ում կարելի է նկատել, որ երկրի որոշումների կայացման գործընթացում ամենաակտիվ մասնակցությունը հարցվողներն ունենում են ընտրությունների միջոցով. հարցվածների 69%-ը կամ 83 հոգի նման կերպ է պատասխանել: Այնուհետև որոշումներին մասնակցության ակտիվությունը դրսևորվել է սոցիալական ցանցերում կարծիքներն արտահայտելու միջոցով, որը նշել են հարցվածների 64%-ը կամ 77 հոգի: Մյուս կողմից՝ հարցվողներն ամենաքիչը մասնակցում են ավագանու նիստերին: 79% կամ 95 հոգի նշել են, որ չեն մասնակցում դրանց: 74% կամ 89 հոգի նշել են, որ չեն մասնակցում օրենքի առցանց քննարկումներին, 70% կամ 84 հոգի չեն մասնակցում ստորագրահավաքներին, 68% կամ 81 հոգի դիմում-բողոքներ չեն ներկայացնում և 62% կամ 74 հոգի առհասարակ չեն մասնակցում հանրային քննարկումներին:

Խտրականության դրսևորումները

Ուսումնասիրության հիմնական նպատակն էր հասկանալ, թե խտրականության ինչ դրսևորումների են երբևէ հանդիպել հաշմանդամություն ունեցող անձինք: Քանի որ հարցաթերթը պարունակել է նաև բաց և կիսափակ հարցեր, հնարավորություն է ստեղծվել հասկանալու, թե խտրականությունը հիմնականում որտեղ և ինչպես է դրսևորվում:

Համաձայն հետազոտության արդյունքների՝ խտրականությունն սկսվում է ընտանիքից, այնուհետև կարող է դրսևորվել նաև հասարակական տարբեր ինստիտուտների հետ շփման ժամանակ: Այն կարող է առաջանալ աշխատանքի ընդունվելիս, ուսման կամ բուժօգնություն ստանալու ընթացքում և կենսագործունեության տարաբնույթ իրավիճակներում ու վայրերում:

«Խտրականությունը տարբեր է: Սկսած, դու որ քայլեիր, կտվորեիր էլ, իսկ հիմա քեզ 9-ամյա կրթությունն էլ հերիք է: Դրա պատճառով էլ ես հիմա ոչ կարում եմ շարունակեմ ուսումս, ոչ էլ լավ աշխատանք գտնեմ: Տանը մուտքը փոխեցին ու հաշվի չառան, որ ես կարողա ընդհանրապես չկարողանամ տանից դուրս գամ, աշխատանքի գնամ, իսկ աշխատանք գտնելուց էլ պետք է հեռավար մի բան գտնեմ, որ ոչ մեկին չասեմ՝ տար-բեր: Աշխատանքի համար էլ մեկը զանգեց, պլանշետի փող ուզեց ու խաբեց, էդ էլ դառավ թեմա, թե խի դիմիր, մեզ խայտառակեցիր: Մեզ ինչ գործ, ինչ բան: Կոպիտ ասած ապրի մինչև կմեռնես: Լավա էլի: Ի՞նչ նպատակ, ի՞նչ բան: Նախքան վիրուսը ԱԻՆ-ից կանչեցին՝ ոչ թողեցին ես գնամ, ոչ տարան դիմումս: Գնաց կորավ: Հիմա էլ համավարակի ընթացքում խոցելի խումբ եմ, մերժում են: Եկած ժամանակ, ասում են դու էս տանը չես օգնում, չկամ ես, դու ինչ գիտես աշխատելն ինչա: Նենց որ ընտանիքում ապրելը բան չի փոխում: Դու՝ քո հարցերը ու քո առողջությունը, ժամանակ չկա: Էլի լավա քուրս քաղաքումա ապրում: Գնում եմ սեմինարների կամ մոնիթորինգի գնալուց, գնում եմ իմ ֆինանսը, որ հերիքի, ես կարանամ իմ սովորելու, տրանսպորտի հարցը լուծեմ: Պետությունն ինչ իրավունք էլ տա, օգտվողա պետք»:



Գրաֆիկ 13. Հարցվածների՝ խտրականության հանդիպելու դեպքերը

Գրաֆիկ 13-ում երևում է, որ հարցվածների գերակշիռ մեծամասնությունը՝ 69%-ը, երբևէ հանդիպել է խտրականության: Ընդ որում՝ խտրականության հանդիպած հարցվածների 58%-ը հիմնականում հենաշարժողական ֆունկցիաների խանգարումներով հարցվողներն են, 31%-ն ունի հաշմանդամության 1-ին խումբ, 29%-ը՝ 2-րդ խումբ, իսկ 27%-ը՝ 3-րդ: Խտրականության հանդիպած հարցվածներն ըստ սեռի՝ 38%-ը տղամարդիկ են, իսկ 62%-ը՝ կանայք: Այսինքն՝ կանայք շուրջ 1,5 անգամ ավելի հաճախ են հանդիպում խտրականության: Այլ ընդգծված դրևորումներ՝ ըստ բնակավայրի տիպի, կրթության և տարիքի չեն արտահայտվել:

Գրաֆիկ 14-ում կարելի է տեսնել, որ հարցվածները հաշմանդամության պատճառով ամենաշատ մտահոգություններն ունեն գումար ձեռք բերելու և ապագայում ընտանիք կազմելու հարցում: Այսպես, հարցվածներից 46-ն մտավախություն ունեն, որ իրենց հաշմանդամության պատճառով անհրաժեշտության դեպքում իրենց կարող են մերժել վարկի (ապառիկ վաճառքի) տրամադրման հարցում: Հաջորդիվ ըստ հաճախականության հարցվածներից 45-ը մտավախություն ունի, որ չի գտնի իր երկրորդ կեսին կամ չի կարողանա ընտանիք կազմել: Հաջորդիվ, հարցվածների 32-ի մոտ մտավախություններ կան, որ հաշմանդամության պատճառով կարող են իրենց մատնացույց անել, անվանարկել կամ ծաղրել

հանրության առաջ, և 34-ն էլ անհանգստանում և լարվում են գործատուի մոտ՝ մտածելով, որ վերջինս իրենց կծաղրի կամ կվիրավորի: Հարցվածներն ամենաքիչն են կարծում, որ հնարավոր է խնամատարի կամ բուժքրոջ կողմից վատ վերաբերմունքի և անտեսման արժանանան: Նույն կերպ նաև ցածր է խտրականության հավանականությունը կրթական հաստատություններում: Պատճառը թերևս վերջին տարիներին ներդրված ներառական ուսուցման դրական ազդեցությունն է: Ինչպես երևում է արդյունքներից, բռնության հանդիպելու մտավախությունները ևս բարձր չեն հարցվողների շրջանում: Միայն 19-ն են նշել, որ վախենում են ֆիզիկական հարձակումներից, երբ հայտնվում են մարդաշատ վայրերում:



Գրաֆիկ 14. Հաշմանդամության պատճառով խտրականության դրսևորումները



Գրաֆիկ 15. Հաշմանդամության պատճառով խտրականության տարբեր դրսևորումների հանդիպման հաճախականությունը հարցվողների մոտ



Գրաֆիկ 16. Սեռով պայմանավորված խտրականություն

Գրաֆիկ 15-ից տեսնում ենք, որ հարցվածների գերակշիռ մեծամասնությունը կյանքի ընթացքում բախվել է անհավասար վերաբերմունքի, ողջամիտ հարմարությունների չապահովման և վատ վերաբերմունքի: Այս հարցում ևս երևում է, որ բռնության դեպքերը շատ հազվադեպ են հանդիպում հաշմանդամությամբ պայմանավորված: Հարցվողների քառորդ մասը նշել են, որ երբևէ խտրականության չեն հանդիպել: Մյուս կողմից հաջորդ գրաֆիկից երևում է, որ սեռով պայմանավորված կարող են հանդիպել կրկնակի խտրականության դեպքեր: Հետաքրքրական է, որ հարցվողները, ովքեր կարծում են, որ հավանական է խտրականության հանդիպեին, եթե լինեին հակառակ սեռի, ավելի շատ (65%) կանայք են:

«Մարդկանց վերաբերմունքն է ավելի շատ ճնշող: Ներառական կրթություն մտնելով շատ բան կփոխվի, բայց մեծահասակների սերունդը շատ կարծրացած է, որ հաշմանդամություն ունեցողներին այլ կերպ պետք է վերաբերվեն: Հնուց եկած իրենց պատկերացումները խանգարում են, չնայած կա մի փոքր փոփոխություն»:



Գրաֆիկ 17. Հաշմանդամության պատճառով խտրականության հանդիպելիս ձեռնարկվող գործողությունները

Գրաֆիկ 17-ից երևում է, որ հարցվածների մեծամասնությունը՝ 80 անձ, ավելի հաճախ է նշել, որ խտրականության հանդիպելիս փորձում են ինքնուրույն լուծել խնդիրն առանց որևէ մեկին դիմելու: Հետաքրքրական է, որ կանայք (57%) ավելի հաճախ են նշել, որ ինքնուրույն են լուծում խնդիրն առանց միջամտության:

«Ես անընդհատ փորձում եմ ամեն բան ինքնուրույն անել, որ հասարակության մեջ չկաշկանդվեմ»:



Գրաֆիկ 18. Խտրականության հանդիպելիս հարցվողների՝ իրավունքների պաշտպանության կարողությունները



Գրաֆիկ 19. Անհրաժեշտ օգնության հնարավորությունները խտրականության հանդիպելիս

Այսպես, Գրաֆիկ 18-ից պարզ է դառնում, որ շատերը մասամբ կարող են պաշտպանել իրենց իրավունքները, եթե հանդիպեն խտրականության: Նույն կերպ Գրաֆիկ 19-ում կարելի է նկատել, որ թեպետ շատերը գտնում են, որ կարող են ստանալ անհրաժեշտ պաշտպանությունն ու աջակցությունը, սակայն ավելի մեծ թիվ են կազմում նրանք, ովքեր տեղյակ չեն, թե արդյոք իրենք կամ ընտանիքի անդամները կստանան աջակցություն և/կամ պաշտպանություն անհրաժեշտության դեպքում: Այսինքն՝ խոսքը ոչ միայն ինքնուրույնության մասին է, այլև նման իրավիճակներում արդյունավետ մեխանիզմ-ների կամ դրանց վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության բացակայության մասին:

«Հույսս իմ վրա է միշտ, պետությունը անզոր է ինչ որ բան անել, ուղղակի անտեսում է: Չկա կարիքի հստակ գնահատում, պետությունն ինձ միայն թոշակ է տալիս և պրոթեզավորման հարցում է օգնում, մնացած դեպքերում 0 է: Անտեսված եմ ցանկացած սոցիալ օժանդակության հարցում, աշխատավարձի ու վարձերի, հարկերի զեղչ չկա: Եթե ինչ որ բանի հասել եմ իմ կյանքում միայն աշխատասիրության, համառության ու նաև ընկերներիս շնորհիվ է: Պետությունը միայն թղթի վրա մնացող օրենքներ են գրում ու չեն հետևում: Ես երազում եմ, որ մի օր լինի եվրոպական մոտեցում հաշմանդամի հանդեպ Հայաստանում»:



Գրաֆիկ 20. Հայաստանում անխտրական միջավայրի ապահովման գործող սկզբունքները

Գրաֆիկ 20-ում պատկերված է, թե հարցվողներն ինչ կարծիք ունեն Հայաստանում անխտրական միջավայրի ապահովման սկզբունքների կենսունակության մասին: Այսպես, մեծամասնությունը (42-ը) կարծում է, որ թվարկված սկզբունքներից ոչ մեկը չի գործում: Իսկ հարցվածների 1/3-ը գտնում է, որ երկրում առկա է «հարգանք արժանապատվության, ինքնուրույնության, ազատ ընտրության իրավունքի նկատմամբ»: Հաջորդիվ՝ հարցվողները կենսունակ են համարում «հարգանքը հաշմանդություն ունեցող անձանց յուրահատուկ լինելու հանդեպ» սկզբունքը: Ամենաքիչը (17-ը) գտնում են, որ երկրում «խտրականության ցանկացած տիպի բացառման» սկզբունքն է գործում: Սա նշանակում է, որ խտրականության տարբեր դրսևորումների նկատմամբ բացառման սկզբունքը թե՛ հանրային, թե՛ պետական մակարդակում չի պահպանվում:

Իսկ, թե ինչ են զգում հացվողները, երբ հանդիպում են խտրականության, ներկայացված է ստորև աղյուսակում:

Զգացողություն	Հաճախականություն
Վիրավորանք	11
Զայրույթ, բարկություն	7
Պայքարելու ցանկություն հանուն իմ և այլոց լիարժեք կյանքի համար	6
Զզվանք, նողկանք	5
Տխրություն, թախիծ	5
Ընկճվածություն, նեղվածություն, սրտնեղում	5
Ցավ	3
Հիասթափություն, հուսահատություն	5
Անարդարություն	2
Անտեսվածություն, անօգնականություն, արհամարհանք	2
Վախ	2
Նվաստացում	1
Տհաճ զգացողություն է, հիշեցնում է քեզ, որ դու մյուսների նման չես	1
Անտարբերություն	1
Զենքի բացակայությունը...	1

Աղյուսակ 2. Հարցվողների զգացողությունները խտրկանության հանդիպելիս

Այս հարցի շուրջ որակական հարցազրույցների ընթացքում ստացված տեղեկատվությունը ներկայացնում ենք առանց մեկնաբանության.

«Դպրոցում եմ շատ կաշկանդվել, ուսուցիչների խտրական վերաբերմունքի պատճառով: Հիշում եմ դեպք, որ ես պետք է շարք կանգնեի, ու ուսուցիչը հանեց ինձ, որ ես չմասնակցեմ, քանի որ կարճահասակություն ունեմ»:

«Ձեռնափայտով, եթե տեսնում են, աշխատանքի չեն ընդունում: Ինձ համար կարևոր է, որ ես ինքնուրույն իմ երկրում կայանամ: Ներկա պահին ես ուսուցման ժամանակ խնդիր ունեմ և հմտությունների բացակայության պատճառով չեն օգնում, որ որպես սկսնակ առաջ գնաս: Ասում են կասայում (касса) չես կարող աշխատել ձեռնափայտով: Գործատուներին պետք է բարետես արտաքին, ամեն ինչում իբրև թե խորամանկ, թեթևսոլիկ մարդ, որի պատճառով չեմ կարողանում աշխատանք չեմ գտնում:
Ինձ այնքան հնարավորություն չեն տալիս, որ այդ իմ ուսուցումը ես կարող էի մի քանի օրվա պրակտիկայի արդյունքում անեի»:

«Անգամ շենքում անհավասար վերաբերմունք կա: Շենքում մի բան փչանում էր, ասում էին քո էրեխենա արել: Ես էլ ասում էի, իմ էրեխեն հազիվ մի աչքով կարողանում է տեսնել, ո՞նց պետք է դա արած լինի»:

«Հանդիպելով որևէ խոչընդոտի ես փորձում եմ ավելի դրական վերաբերվել: Կարծում եմ, որ դեռ ժամանակը պետք է գա, որ լուծվի այդ խնդիրը, քանի որ Հայաստանում դեռևս չկան համայնքներում այդքան գիտակցություն և ռեսուրսներ»:

Հարցման մասնակիցների սոցիալ-դեմոգրաֆիական տվյալները





Տարիքը



Ամուսնական կարգավիճակը



Կրթական ամենաբարձր աստիճանը



Զբաղվածությունը



Ինչպե՞ս կբնութագրեք ձեր ընտանիքի սոցիալ-տնտեսական վիճակը



Միջինում որքա՞ն է կազմում Ձեր ընտանիքի ամսական եկամուտը մեկ անձի հաշվով (հազ.դրամ)



Առաջարկություններ

- Ավելացնել պետական աջակցության ծրագրերը հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության հիմնախնդիրների լուծման ուղղությամբ:

- Ապահովել միջավայրի մատչելիությունը բոլոր տեսակի հաշմանդամություն ունեցող անձանց համար, այդ թվում՝ ստեղծել անխոչընդոտ և մատչելի միջավայր սակավաշարժուն անձանց ազատ տեղաշարժման և հանրային կյանքին մասնակցելու համար: Բացառել հետևյալ և նմանատիպ արդի խնդիրները. թեքահարթակների զգալի մասի անհամապատասխանությունը չափանիշներին, ձայնային ազդանշաններով միակողմանի լուսաֆորներ խաչմերուկներում (օրինակ՝ չտեսնող անձը մի կողմը կարողանում է անցնել, մյուսը՝ ոչ) և այլն:

- Կոնկրետ, գործուն քայլերով խթանել հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավվածությունը հասարակության մեջ. դա խտրականության դեպքերի բացառման կամ նվազեցման արդյունավետ ճանապարհ է:

- Աստիճանաբար՝ ըստ հստակ ժամանակացույցի և գործողությունների պլանի, ապահովել կրթական հաստատությունների իրական ֆիզիկական մատչելիությունը (հարթ մուտքեր կամ թեքահարթակներ, վերելակներ, հարմարեցված սանհանգույցներ և այլն): Դպրոցներն ու համալսարանները շատ անհարմար են հարցվածների համար:

- Հայփոստի բաժանմունքներում հաճախորդների սպասարկման համար ստեղծել մատչելի պայմաններ՝ բացառելով հետևյալ և նմանատիպ խնդիրները. սեղանները բարձր են, մուտքերն անմատչելի են, ներսում առկա են խոչընդոտներ և այլն: Սա հատկապես ակտուալ է, քանի որ հաշմանդամություն ունեցող և տարեց անձանցից շատերը թոշակներն ստանում են Հայփոստից:

- Բանկերի սպասարկման սրահների սարքավորումները, բանկոմատներն ու շենքերը հարմարեցնել հաշմանդամություն ունեցող անձանց համար:

> *«Բանկոմատները շատ բարձր են: Շենքային պայմանների պատճառով դու ուշադրության կենտրոնում ես հայտնվում: Բանկերն էլ ապարատներն այնքան բարձր են կամ այնպես են սարքած, որ պետք է ձգվես: Կեսն են միայն հարմարեցված»:*

- Պետական կառույցներում աշխատանքի ընդունել հաշմանդամություն ունեցող անձանց ԱԻՆ-ի օրինակով: Օրինակ՝ ներդնել քվոտային համակարգ աշխատակազմի համալրման հարցում, որպեսզի աշխատակազմի մի մասն անպայման հաշմանդամներ լինեն:

> *«Ծանոթների միջոցով ենք հիմնականում աշխատանքի ընդունվում: Պատճառը հայտնի չէ, թե ինչու չեմ կարողացել աշխատանք գտնել, բայց հիմնականում եղել է, որ ասել են կամ ակնարկել են, որ աշխատանքի չեն ընդունում հենց հաշմանդամության համար: Եթե պետական հաստատություններում լինեն տեղեր, շատերի համար դա օրինակ կծառայի»:*

- Հաշմանդամություն ունեցող անձանց համար այլոց համեմատ հավասար հնարավորությունների ապահովման համար շատ դեպքերում անհրաժեշտ են հավելյալ՝ հաստատական գործողություններ կամ խթանիչ միջոցներ:

> *«Դրա համար գնում ես գործատուի մոտ, իրենք ասում են հավասար հնարավորություններ են, ես ընտրում եմ առողջին, քանի որ հավասարություն է: Բայց մասնավորի վրա ճնշում չի կարող գործադրել: Եթե պետական ապարատում մեզ տեղ չեն տալիս, մասնավորին չեն կարող ստիպել կամ պարտադրել»:*

- Ընդլայնել սոցիալական ներառման ծրագրերը և բարձրացնել պետական ուշադրությունը հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրներին. աջակցել ժամանցի կազմակերպման, առողջապահական և սոցիալական ծառայությունների մատուցման հարցում:

> *«Ցանկացած հաշմանդամ, եթե զբաղվածություն ունի ու հնարավորություն ունի տանից դուրս գալու, հատկապես թատրոն գնալու համար, ինքը ինքստինքյան ճնշում կգործադրի հանրության վրա: Ինքն իր համար կստեղծի թե ժամանացը, թե ամեն բան: Սակայն մոտեցումը պետք է պետական լինի, որպեսզի մյուսներն էլ դրան ձգտեն»:*

- Սոցիալական գովազդների, տարաբնույթ արշավների միջոցով ավելացնել հասարակության իրազեկվածությունը հաշմանդամների կարիքների ու իրավիճակի մասին:

> *«Պետք է հասարակության մեջ իրազեկվածությունը բարձրացվի: Դա փորձի պակասից է գալիս և մարդը, ով մի քանի անգամ խտրականություն է հանդիպում, ոչ թե պետք է կոմպլեքսավորվի, այլ մտածի, թե ինչ գործողություններ անի: Դա ինձ համար չեմ ասում, այլ այն մարդկանց մասին եմ խոսում, ովքեր պարփակված են ու չեն պաշտպանում իրենց իրավունքները: Կարող են իրենք դիմեն տարբեր իրավապաշտպան կազմակերպությունների, պարզապես իրենք պետք է պատասխանատվություն վերցնեն իրենց համար»:*

- Կազմակերպել հաշմանդամություն ունեցող անձանց անկախ կյանքի վերաբերյալ դասընթացներ ծնողների, գործատուների և հասարակության այլ անդամների շրջանում:

> *«Դասընթացներ լինեն հաշմանդամների հետ, հատկապես գյուղերում ապրող մարդկանց շրջանում, քանի որ այնտեղ շատ թերի է և ոչ ոքի չի հետաքրքրվում, թե գյուղերում մարդիկ ինչպես են ապրում»:*

- Պետական վերահսկողություն սահմանել աշխատաշուկայում հաշմանդամների նկատմամբ շահագործման և չարաշահման դեպքերի առնչությամբ. միջոցառումներ իրականացնել նման գործատուներին հայտնաբերելու և պատասխանատվության ենթարկելու համար:

- Բարձրացնել հաշմանդամություն ունեցող անձնանց իրավագիտակցության մակարդակը:

> *«Խոցելի խմբերն ավելի շատ ներգրավվեն իրազեկման դասընթացներում: Ծրագրեր լինեն, որտեղ ազատ կարծիք արտահայտեն, սովորեցնեն, թե ուր դիմեն, ինչպես պաշտպանեն իրենց իրավունքները: Շատերը խոցելի են ու հասանելի չեն այդ ծրագրերին, ու պետք չի որ Հայաստանում մարդիկ բախվեն այդ խնդիրներին»:*

- Անհրաժեշտ է իրականացնել ինստիտուցիոնալ բարեփոխումներ հաշմանդամների կյանքի որակի բարձրացման, իրավունքների պաշտպանության և հասարակական ակտիվության բարձրացման նպատակով:

> *«Խտրականությունն ըստ իս առաջանում է հենց այն ժամանակ, երբ հաշմանդամն ինքն իր իրավունքները չի գիտակցում ու տարբեր շերտերի հետ չի գործում»:*

- Հաշվի առնել հաշմանդամություն ունեցող անձանց կարծիքները ՏԻՄ և այլ մարմիններում որոշումների կայացման ժամանակ:

> *«Որոշումների կայացման համար հաշմանդամության տեսակն է կարևոր, հատկապես եթե մտավոր հետամնացության մասին է խոսքը: Կան ընտանիքներ, որ որոշումների կայացմանը հաշմանդամները չեն մասնակցում: Հայաստանում կան հնարավորություններ մասնակցելու որոշումների կայացմանը, սակայն հաշմանդամների կարծիքը միշտ չի ընդունվում»:*

- Կրթական միջավայրում դյուրացնել հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավվածությունը՝ վերացնելով հաշմանդամների տեղաշարժման և տրանսպորտային միջոցներից օգտվելու դժվարությունները: Այդ դեպքում ավելի մոտիվացված ու կրթված մարդիկ կներգրավվեն կրթական ու քաղաքական գործընթացներում՝ լինելով հաշմանդամ:

> *«Կրթության հետ կապված հաշմանդամները խնդիրներ ունեն, քանի որ տեղաշարժման դժվարություններ կան. հաշմանդամները, եթե տրանսպորտով ապահովված լինեն, նրանց նկատմամբ հանրային վերաբերմունքը ևս կփոխվի գլոբալ իմաստով»:*

- Գործատուներին շահագրգռել պետական ծրագրերով, որպեսզի նրանց ձեռնտու լինի հաշմանդամներին աշխատանքի վերցնել երկարաժամկետ կտրվածքով:

> *«Ինձ համար ամենակարևորը կրթության հարմարավետությունն է, աշխատաշուկայում մրցունակության փոփոխությունն է: Պետք է իրականացնել միջավայրի հարմարեցում, կարգավորել աշխատավարձի, գրաֆիկի հետ կապված հարցերը»:*

- Հաշմանդամություն ունեցող անձանց համար հնարավորություններ ստեղծել պետական պաշտոններ զբաղեցնելու համար:

> *«Օրինակ հաշմանդամները չեն կարող աշխատել ուժային կառույցներում: Դա հնարավոր է կոմպենսացնել: Սոցիալական այլ հարցեր կան, օրինակ իմ կարծիքով, ոչ թե հաշմանդամներին պետք է պետական թոշակ տրամադրել, այլ հնարավորություններ ստեղծել աշխատելու ու գումար վաստակելու համար»:*